Ամենքը բացարձակ յայտնում են, որ Գլադստոն, միանալով Ռուսաստանի հետ, մտադիր է բաժանել Թիւրքիան։ Անգլիական առաջին մինիստրը այլ ևս չէ հետևում բարեկամական խորհուրդներին։ Գլադստոն ֆրանսիայի դէմ չափազանց զրգռված է, որովհետև այդ պետութիւնը ևրօպական միւս պետութիւնների հետ կատարելապէս համաձայնութեամբ չէ ուզում գործել։ Պահպանողական լրագիրները զգուշացնում են կառավարութեանը, իսկ ազատական լրագիրները ընդհակառակը պնդում են, որ կառավարութիւնը, մինչև անգամ եթէ միայնակ էլ մնայ, այնու ամենայնիւ պէտք է սատկի։ Բ. Դրանը, որ նա այլևս չընդդիմադրէ չերնօգորիական, յունական և հայկական խնդիրների լուծմանը։

«Times» լրագրին Բաղդադից գրում են, որ Բիգա-փաշա ցանկացել է տալ նական միութեան հովանաւորութեան տակ մնալու։ Լիգան մեռել է սպանել Բիգա-փաշային, եթէ նա դաւաճան հանդիսանայ։ Եթէ Բիգա-փաշա կամենար և երկրվի չը գործէր, Դուլցինիօ այժմ չերնօգորցիների ձեռքին կը լինէր։ Սկուտարիի հեռագրերին պէտք չէ հաւատալ, որովհետև նրանք խմբագրվում են Թիւրք փաշաներից։ Ծովապետ Սէյմուր մի նամակ ուղարկեց Բիգա-փաշային սեպտեմբերի 17-ին, որով նա կարձառօտ պատասխան է պահանջում Դուլցինիօն չերնօգորցիներին յանձնելու մասին։ Անգլիական նաւատորմը ձմեռը երևի կը մնայ ալբանական ափերի մօտ։

«St nd rd» լրագրի թղթակիցը, որ հետևում է միացեալ նաւատորմին, Բաղդադից գրում է սեպտեմբերի 20-ից։

Այստեղ ամէն բան կասկածանքի և անյայտութեան մէջ է և աշնանային քամիները չափազանց անհանգստացնում են ծովապետներին, որոնք նաւատորմի ամբողջութեան համար պատասխանատու են։ Այստեղի նաւահանգիստը ապահով չէ և փոթորկի ժամանակ նաւատորմները վտանգի կենթարկվին։ Դուլցինիօն չերնօգորցիներին յանձնելու մասին ոչինչ տեղեկութիւն չենք ստանում, իսկ եթէ այժ գործ դրվի, բոլոր նաւերը իսկոյն կը հեռանան։ Ցայտնի չէ, թէ գա-

---

էի գաւառում կրկին ոչնչացրեց մինչև քսան հայոց գիւղեր։ Այդ մի պարզ ասպատակութիւն էր, որ համարեա ամէն տարի պատահում է Հայաստանում։ Բայց Կ. Պոլսում նրան տուեցին քաղաքական բնաւորութիւն։

Նոյնը կարող է պատահել և այստեղեան։ Թուրքաց կառավարութեան ներկայացուցիչները գաղտնի կերպով կը զրգռեն քրդերին հայերի դէմ. կոտորած կը սկսվի. իսկ Կ. Պոլսում թէ Բ. Դուռը, թէ Թուրք մամուլը կը սկսեն գոչել, ահա քրդական միութիւնը, տեսաք, այդ բոլոր կոտորածը Հայաստանին ինքնավարութիւն և հայերի համար արտօնութիւններ պահանջելու համար է։ Մինչդեռ քրդերը ինքնավարութեան և Հայաստանի վերանորոգութիւնների մասին ոչինչ գաղափար չունեն, և հասկանալ անգամ չեն կարող, թէ ինչ բան է վերանորոգութիւնը։ Նրանք կը կատարեն իրանց բարբարոսութիւնները, որպէս միշտ, լոկ յաւիտենական հայիրութեան նպատակով, բայց Թուրքաց կառավարութիւնը կը տայ նրանց քաղաքական նշանակ։

Թէ այսպէս, թէ այնպէս, զանազանութիւնը մեծ չէ.— քուրդը արդեօք գիտակցաբար կը գործէ, թէ մեքենաբար,— բոլորը մի և նոյն շետանքին կը հետևանեն, որ Հայաստանում կոտորած տեղի կունենան։ Փաստեր արդէն կան։ Դեռ երէկ կարդացինք մի հեռագիր, որով Վանի անգլիական կոնսուլը իմացուց է տալիս Կ. Պոլիս, թէ քրդերը ոչնչացրին հայոց 13 գիւղեր։

Հարցնում ենք, ինչ պէտք է անեն այդ դէպքերում հայերը։ Մինչև հիմայ երբ քրդերը կողոպտում էին, սպանում էին, սպանում էին, հայերը զիմում էին Թուրքաց կառավարութեանը և դատասան էին պահանջում։ Բայց հիմայ, երբ կառավարութեան ներկայացուցիչները իրանք են զրգռում քրդերին նաղան կառավարութիւնները ինչ տեսակ հրահանգներ են տուել իրանց ծովապետներին։ Ամենքը գիտեն, որ եթէ ծովապետ Սէյմուր այժմ կը գործ դնէ, նրան միայն ռուս նաւերը կօգնեն։ Սէյմուր մի նամակ ուղարկեց Բիգա-փաշային և նամակատարը սեպտեմբերի 23-ից շուտ չի վերադառնայ։ Հաւանական է, որ ծովապետ Սէյմուր կուզեորվի Սկուտարի։ Բիգա փաշան թէպէտ Բ. Դռնից ստացել է հրահանգներ, բայց որոշ հրամաններ չունի պրանցիների դէմ այժ գործ գնելու մասին։ Նաւատորմի գլխաւոր հրամանատարութիւնը անգլիական ծովապետ Սէյմուր ընդունեց և այդ բոպէից սկսվեցաւ ծովային իսկական ցոյց։ Սէյմուր հրաման է ստացել իր կառավարութենից ոչ թէ միայն ռմբակոծել Դուլցինիօ, այլ և ֆրակ բացանել ալբանցիների դէմ, եթէ մինչև անգամ նրանք ամրոցներով պաշտպանված էլ չը լինեն։

«Էյտերի» ընկերութեանը հաղորդում են, որ սեպտեմբերի 18-ին պ. Գոշեն տեսնվեցաւ սուլթանի հետ։ Նա բողոքեց Թիւրքաց կառավարութեան Դուլցինիօի գործի մէջ բռնած ընթացքի դէմ։ Դեսպանը պատասխան թողնել Կ. Պոլիս, եթէ Բ. Դուռը չը կատարէ նրա պահանջները։ Թիւրքաց արտաքին գործերի և զինուորական մինիստրները ամբողջ գիշեր խորհրդակցում էին անգլիական դեսպանի հետ։

«Polit. Corresp.» լրագրին Աթէնքից գրում են, որ Նանինայի գլխաւոր նահանգապետը հրաւիրել է իր մօտ անուանի ալբանցիներին և առաջարկել է նրանց ալբանցիներից կամաւորների զօրաբաժիններ կազմել։ Նահանգապետը խոստացել է ալբանցիներին օգնութիւն հասցնել թէ դրամով և թէ զէնքով։

ԹԻՒՐՔԻԱ

—

«Polit. Corresp.» լրագրին գրում են Կ. Պոլսից սեպտեմբերի 17-ից։

Հէնց որ Սայիդ-փաշա առաջին մինիստրի պաշտօն ստացաւ, օտար պետութիւնների դեսպանատունների ծառայողները շտապեցին շնորհաւորել նրան։ Հաւատացնում են, որ

բարբարոսութիւններ գործել, էլ ում կարող են դիմել հայերը։ Մեզ կը պատասխանեն, թէ—Եւրոպային, որ յանձն է առել հսկել Հայաստանի բարկարգութիւնների վրա։ Բայց մինչև Եւրոպան կը քննէ, կը տեղեկանայ Հայաստանում գործածները, մինչև օգնութեան ձեռքը կը հասցնէ (կը հասցնէ՞ արդեօք) ինչպէս ասում են՝ «Լուրը կը գայ, ջրաղացը կը տանէ»...

Հայերը այժմ լաւ հասկացել են այդ։ Հասկացել են, որ հասել է մի վճռական րոպէ, երբ կամ պէտք է յանձն առնել ստրկաբար ոչնչանալ, կամ եթէ ցանկանում են իրանց գոյութիւնը պաշպանել, հարկաւոր է ամէն ուժերով ընդդիմադրել քրդերի վայրենի յարձակումներին։ Ուրիշ ճար չը կայ։ Այդ իսկ պատճառով կազմվեցան հայերից զինեալ խումբեր, որոնց նպատակն է ոչ թէ ապատամբութիւն, ոչ թէ պատերազմ Թուրքաց կառավարութեան դէմ, այլ պատժել քրդերին, եթէ նրանք կը յանդգնեն խռովել երկրի խաղաղութիւնը և կողոպտել անզէն հայ գիւղացիներին։ Այդ զինեալ խումբերը, որոնց թիւը փոքր չէ, շրջում են հայկական լեռների վրա, գիտում են թշնամու շարժումը և ամէն տեղ վրէժխնդիր են լինում, երբ նկատում են քրդերի կողմից որ և իցէ անզգուշութիւն։

Հայոց զինեալ խումբերը մինչև անգամ պաշտպանում են քրդերի խաղաղասէր ցեղերին, երբ պատահում է այս վերջիններին ենթարկվել իրանց ցեղակիցների բարբարոսութեանը։ Այդ պատճառով, քրդերից շատերը միացած են հայերի հետ և ուելի բարեր են համարում կռուել ընդհանուր թշնամու դէմ, քան թէ վնասել հայերին, որոնցից միշտ օգնութիւն և հաւատարմութիւն են վայելած։

Հայոց զինեալ խումբերի հետ միացել են երևելի Մար-Շիմոնի քաջ սարդարները։ Մար-Շիմոնը, Զօլամէրիկի լեռների այդ հզոր իշխանը և պարիզ-

---

արտաքին գործերի մինիստր Կազրի-փաշայի անկման պատճառը սուլթանին տուած նրա խորհուրդներն էին։ Կազրի-փաշա առաջարկում էր իր տերոջը չընդդիմանալ միացեալ Եւրոպայի կամքին։ Սուլթանը իր արդիւանաներից մէկին հրամայել էր Եւրոպային ուղղված մի գրութիւն պատրաստել, որով սուլթանը հաւատացնում էր, թէ ինքը իրրև մահմեդականների առաջնորդ անկարող է հրամայել իր զօրքերին, որ նրանք պատերազմեն իրանց կրօնակից ալբանցիների դէմ։ Դուլցինիօն չերնօգորցիներին յանձնելու համար։ Կազրի-փաշային յանձնված էր հաստատել տալ մինիստրներին այդ գրութիւնը, բայց նա հրաժարվեցաւ կատարել այդ յանձնարարութիւնը և իր կողմից խաղաղասէր առաջարկութիւններ արաւ։ Նոյն օրը Կազրի-փաշա ներկայացրեց իր հրաժարականը, բայց սուլթանը սովորականին հակառակ գրեց իր խատի մէջ, որ մինիստրը հեռացրած է պաշտօնից։ Բոլոր դեսպանները համաձայն են հրաժարված մինիստրին, որովհետև նա միւսներից աւելի խելացի կերպով էր գործում։ Կազրի-փաշա հաւատացած էր, որ իր հայրենիքի համար աւելի լաւ է ենթարկվել Եւրոպայի կամքին, քան թէ նրան ընդդիմանալ։ Ամենքը հետաքրքրութեամբ սպասում են, թէ Սայիդ-փաշա ի՞նչպէս կը վերաբերվի ծովային ցոյցին։ Թիւրքաց գործերի հետ լաւ ծանօթ մի բարձրաստիճան Թիւրք հաւատացնում է, թէ Սայիդ փաշա այնքան խենթ չէ, որ ընդդիմանայ Եւրոպայի կամքին, կամ սուլթանին այդպիսի խորհուրդ տայ։

Ասում են, որ Արթին Դադեանին պատուիրած է մի գրութիւն պատրաստել, որի համեմատ նախ պէտք է խստութեամբ որոշել սահմանները, իսկ յետոյ յանձնել Դուլցինիօ Չերնօգորիային։ Չերնօգորիայի իշխանը մեծ դժուարութեամբ է հրաժարվում Գրուդայից և Դիւնօշից։ Կառավարիչները համաձայն են այդ տեղերը թողնել Թիւրքիային, եթէ սա գործը խաղաղութեամբ կը վերջացնի։ Սուլթանի ընդդիմադրութեան պատճառները նրա կրօնական զգացմունքներն են։ Արդուլ-Համիդ վախենում է անպատուել մահմեդականների

արդը, չէր կարող մոռանալ այն հին և սոսկալի հարուածը, որ նախորդ Մար-Շիմոնի*) ժամանակ Բեռանի բռնակալ Բադիր-խան-բէկ անունով քուրդ ասպատակը հասցրեց պատրիարգի տանը, իսկ ուղղակի կողոպտելով նրան, և կոտորելով մինչև տասն հազար սասրիներ։ Այն օրից քրդերի և Մար-Շիմոնի ցեղի մէջ շարունակվում էր մի անընդհատ թշնամութիւն, որ շատ անգամ պատճառ էր տալիս արիւնահեղ կռիւների։ Դեռ երկու տարի առաջ, երբ քրդերը ասպատակեցին Զօլամէրիկի մի քանի գիւղերը և արօտից աւարի առան պատրիարգի ջորիների երամակը, սասրիները այդ ժամանակ սաստիկ ջարդ տալով քրդերին, յետ խլեցին կողոպտուը։ Ունենալով անդադար ընդհարումներ քրդերի հետ, Մար-Շիմոնը չէնց խաղաղութեան ժամանակներում միշտ պատրաստ ունէր մինչև 30-40 հազար զինեալ մարդիկ, իսկ այժմ ամբողջ Զօլամէրիկի թէ հայերը և թէ սասրիները զինված են։

Անցեալ ձմեռվայ սովը, իր սարսափելի հետևանքների հետ, մի և նոյն ժամանակ սաստիկ նրպատաց հայերի այժմեան շարժմանը։ Սովի ժամանակ հայերը պարզապէս տեսան Թուրք պաշտօնատարների չարամտութիւնը, որոնք ամէն ենթադատ միջոցներ գործ էին դնում, որքան կարելի է, բազմացնել հայ սովամահների թիւը։ Այդ ժամանակից հայերը աւելի խորին կերպով համոզվեցան, որ Թուրքիան նպատակ ունի իսպառ ընաջինջ անելու հայկական տարրը։ Այդ ժամանակից ծագեց հայերի մէջ անձնապաշտպանութեան զգացմունքը։

---

*) Նեստորական սասրիների պատրիարգական աթոռը ժառանգական է, բոլոր պատրիարգները յաջորդաբար ընտրվում են մի և նոյն տեղից և կոչվում են Մար-Շիմոն, որ նշանակում է՝ Տէր-Սիմոն։

կրօնական համոզմունքները։ Նա երբէք չէ հրամայի իր զօրքերին հրացան արձակել ալբանցիների դէմ եթէ այսպէս չը լիներ Բիգա-փաշայի 11,000 թիւրք զօրքերը բաւական էին ալբանցիներին յաղթելու։ Հասմար։ Քանի որ մեծ պետութիւնները խաղաղութիւնը պահպանելու համար իրանց պահանջները չափազանց սահմանափակել են, սուլթանը և նրա խորհրդատուները անտարբերի գործ կը լինեն կատարած, եթէ իրանք էլ զիջումներ չեն անի։

ԱՐՍԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

— Փարիզից «Polit Corresp.» լրագրին գրում են. Ցանկալի կը լինէր, որ անգլիական առաջին մինիստրը չերնօգորիական և յունական հարցերը վերջացնելուց յետոյ, շատ չը զրգռէ ևրօպական պետութիւններին սոսկալի միջոցներ գործ դնել Հայաստանի մէջ և այլ տեղեր վերանորոգութիւններ մտցնելու մասին։ Այժմ պ. Դլադստոն պահանջում է Թուրքահօների օգնութիւնը դիմել։ Միւս անգամ նա կը պահանջի նաւերից ափը զորքերը իջեցնել և եթէ ընդհանուր վերանորոգութիւնները չեն իրագործվի, որ շատ հաւանական է, Պլադստոն կը ցանկանայ արաւել Կ. Պոլսի վրա և Թիւրքիային իր հոգաբարձութեանը ենթարկել։ Այս բոլորը անկարելի է թոյլ տալ, այդ պատճառով Ֆրանսան զգոյշ է վարվում, երբ հարկաւոր է լինում դիմել ոյժին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 սեպտեմբերի։ «Новое Время» լրագիրը լսել է, որ եկող տարվանից Սամսոնովիչ կը սկսի հրատարակել մի մեծ ամենօրեայ լրագիր «Порядокъ» վերնագրով։

ԼՕՆԴՈՆ, 21 սեպտեմբերի։ Գլադստոն, Գրենվիլ, Գարկօտ և Նորգրբուկ ուղևորվեցան իրանց կալուածները։ Հարթինգտոն կուզեորվի Բեւմօրալ։ Այն լուրը, իբր թէ գուց մինիստրների խորհուրդ է լինելու, անհիմն է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 սեպտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսերը առաջին շրջանի արժէ 94 ր. 25 կ., երկրորդ 92 ր. 25 կ., երրորդ 93 ր. 25 կ., չորրորդ 92 ր. 37 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսերը արժէ 221 ր. 50 կ., երկրորդ 216 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսերը 91 ր., երկրորդ 90 ր. 75 կ., երրորդ 90 ր. 87 կ., ոսկի 8 ր.։ Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 24,62 պէնս։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՇՏԱՐԵՆԻ

Սովը ունեցաւ իր և ուրիշ օգուտները. Նա կապեց բարոյապէս ամբողջ հայ ազգի սրտերը, որոնք աշխարհի ամենահեռաւոր անկիւններից բարկեցին թափել այնտեղ իրանց առատ նուէրները։ Սովը հաշտեցրեց հայերի հետ մի քանի քուրդ ցեղեր, որոնք հաւասար օժանդակութիւն էին ստանում հայոց մասնաժողովներից, որոնք Հայաստանի բոլոր քաղաքներում կազմված էին սովատանջներին օգնելու նպատակով։ Վերջապէս, սովի պատճառով ներկայ տարվայ գարնանը մշակների ահագին բազմութիւն Վանի, Մուշի, Բաղէշի և Էրզրումի կողմերից անցան դէպի Ռուսաստանը և տարածվեցան Անդրկովկասի բոլոր գաւառներում։ Այդ մշակները, այժմ լսելով Հայաստանի վատնդը, խումբերով վերադառնում են դէպի իրանց հայրենիքը։

Թուրքաց հայերի այժմեան շարժումը իրական փաստ է։ Նա դարերը տեսած հաւանգների մի ազգում հետևանք է։ Նա պատմական անհրաժեշտութիւնների մի սոսկալի արտայայտութիւն է։ Թիւրքիան կարող է զսպել այդ շարժումը նրանով միայն, երբ կը կատարէ հայերի իրաւացի պահանջը։ Բայց քանի որ հայկական խնդիրը մեղմելու նպատակով, Թուրքիան կաշխատէ քրդական միութիւն հնարել,—դրանով աւելի ևս կը բորբոքէ հայերի արդար կատաղութիւնը...

ՄԵԼԻՔԶԱԴԵ